

ԿԵՐՊՈՒՆԱԿԱՆ ԹԱԳՈՒՌՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՏԵԼԵԴԵՆՆԵՐ

100 մասում բովանդակութեամբ	բնասափիս	ճարտր.	օսրա.	գինը
կում k	g.	g.	g.	
Հուն	12·5	12·0	—	
Տաւարի միսը . . .	21·0	5·5	—	
Խողի միսը . . .	20·5	7·0	—	շ
Խողի ապուխտը . . .	23·9	36·4	—	է
Հորթի միսը . . .	20·0	1·5	—	պ
Լերդ ու թոքը . . .	19·4	5·4	2·0	ս
Աշխարի միսը . . .	17·0	10·0	—	ր
Սազը	16·0	40·0	—	ռ
Հաւը	17·5	1·4	—	
Ազաւին	18·5	1·0	—	ւ ւ
Արուեստ. մսի փոշին .	73·0	—	7·0	
Կոզի կաթը (սերով) .	3·5	4·0	4·9	ս ս
(ս. հան.)	3·1	0·7	4·8	ս
Հեղը	0·7	84·4	0·6	օ
Թանը	3·4	1·0	5·0	շ
Մարդարինը և այլն	0·4	87·0	0·0	

ԲՈՒՌԱԿ. ԹՈՒ. ՈՒՏԵԼԵԴԵՆՆԵՐ.

100 մասում բովանդակութեամբ	բնասափիս	ճարտր.	օսրա.	գինը
կում k	g.	g.	g.	
Հաճարի հացը . . .	6·0	0·5	47·0	
պլիւրը . . .	11·5	2·0	69·5	
Սպիտակ հացը . . .	6·0	0·5	49·0	
Ցորենի պլիւրը . . .	11·0	1·2	71·0	
Կորեկը	11·3	3·5	67·3	
Ոսպը	24·8	1·8	54·7	
Կաղամբը	1·9	0·2	4·8	
Խնձորը	0·4	0·8	12·0	
Տանձը	0·4	0·2	12·0	
Շլորը	0·8	0·8	11·0	
Ծիրանը	0·5	1·2	11·0	
Սպանակը	2·0	0·3	6·0	
Վանանենը	28·5	35·5	25·9	
Դաշուէն	14·5	12·5	18·5	
Հաքարը	—	—	90·0	
Շլորի չիրը	3·3	0·9	45·0	
և այլն				

100 մասում բովանդակութեամբ	բնասափիս	ալիքնոյ	օսրա (շախար, մրգ, զուածի, մոխիր)	շ
կում k	g.	g.	g.	շ
Շտեմարանի գարեջուր .	0·49	3·68	6·7	
Գորշ .	0·5	—	8·0	

Բայց պէտք է յուսանք, որ մեր մասնադինները կը հոգան այսպիսի մի լիսկատար ցուցակ կազմել մեր տեղական ուտելեցէնների և խմիչքների համար. գերմանացին զանազան Wurst-եր (երշիկներ) է ուտում, իսկ մենք՝ խաւեար, դոչ, զուրգիկներ, նոցա ձկները, նոցա պանիրները աղաղան են, քան մերը. նոքա խմում են գարեջուր, մենք զինի, օղի, թէյ և այլն. Ուրիմն նոցա տախտակները մեզ չեն օդուի:

Ա. Ա.

ՀԱՅՈՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՐԱՋՇՏՈՒԹԻՒՆԵՐ.

ԺԹԱ. ԳԱՐԱՀԱՄ:

Ա. ՃՐԸԱՆ 1839—1874:

— * * —

Տիրացու Բարս Համբարձում Մարգուս (1768—1839). — Հայոց արդի ճայիս միջնիդի զիտեն ու զարգացումը. — Երանդրշական ժողովներ կ. Պայտում. — Խմանակայ միջոց (1864—1873). — Երանական ճայիսագրեւու առաջին փորձեր. —

Տիրացու Բարս Համբարձում մի ծնողներ Խարբերդցի էին: Հայրը՝ Սարգիսը, քաղաքի հարստացարիչ Հարկահանների ձեռքիցն աղաւառելու համար, ընտանիքն առած է. Պոլիս է տեղափոխուում, աղաւանի 1768-ին ծնուռում է Համբարձումը: Նրբ մեծանում է, Հայրը նորան զերձակութեան է տայիսնա յաջողութեամբ սովորում է այդ արհեատը բայց քիչ յետոյ, ժամանակի նշանաւոր հայ նարտարապետի՝ Գրիգոր ամիրաց Պալեանի մօտ զբաղրութեան պաշտօն է ստանում:

Դարուս Հայոց եկեղեցական երաժշտութեան մեջ Համբարձումը յայտնի է իրրե մի տաղանդաւոր Տիրացու: Իրբ հասակն առնում է, Բարս մակդիրն էլ է աւելանում ուտարի Տիրացու Բարս Համբարձում է կոչւում: Սա յաջող ձայն և երաժշտական մեծ ընդունակութիւն ունէր, նուագում էր թիւ թիւ ընդունակութիւն ունէր. Քաջ աեղեակ էր արեւելեան բազմաձիւ եղանակներին և բազմաստենից անսակներին, որ ուսել էր թիւ թիւ ընդունակութիւն ունէր. Հմուտ էր Յունաց եկեղեցական հազարին և երաժշտութեան: Հայոց եկեղեցական բարձրեցողութիւնը սովորում է նաւ ըստ ոմանց, Զէննէ մականուաննալ ամուսնաւոր սարկաւագ Պօլոս գարժապետից (1646—1726) (ամենայն Հայոց ընարեալ կաթուղիկոսի՝ հանգուցեալ Նիկուս Պատրիարք Վարժապետականի պապը), սա ակնյացանի սխալ է, որովհետեւ Համբարձումը ծնուել է 1778-ին՝ ուրեմն վարժապետի մեռնելուցը յետոյ. իսկ ըստ ոմանց՝ Մասլալանի կոչուած մի հայ երաժշտական թուի ծանօթ էր և նորապական երաժշտութեանը:

Դիւղեան Յովհանէս Ձէլէրին նկատում է տիրացու Բարս Համբարձում մի երաժշտական համարձակութիւնը և առնում է իւր հովանու տակ, մինչեւ իսկ ընակարան յատկացնում իւր պատառում: Այդ միջոցին, Պայտից լատինաց Ս. Գեորգ եկեղեցու բակում, զուսաւորչեան գալոցը է բացուում: Յօվհաննէս

1. Տիրացու էին կոչուում եկեղեցական երաժշտական:

ԶԵՂԵՐԻՆ տիրացու Բարս Համբարձումին ե-
կեղեցական երգեցզութեան զասատու է նը-
շանակել տալիս այդտեղ: Համբարձումը շա-
րաթական երկու գաս է տալիս և, շատ շուտ,
մեծ հաշակ է սահնում իւր զասատուու-
թեան նոր ոճով:

Երկար փորձառութիւնը նորա մաքում
յդացնում է այն միտքը, թէ անհրաժէշտ է
ձայնանիշ ունենալ շարականի երգեցզութիւնը
զիւրացնելու և հոգեօր երգերն անկարու ստ-
պահպաննելու համար Շատ չէ անցնում միտ-
քըն իրագործում է: Հնարում է արգի ձայ-
նանիշներն ու ամանակները 1839-ին մահից
մի քանի ամին առաջ, իսկ թէ երին լրացնում են
աշակերտները՝ երրորդական երաժշտութեան
հետեղութեամբ, մասամբ նորա կենդանու-
թեան ժամանակ մասամբ մահից յետոյ: Դար-
ձիք կայ իրը թէ նախքան Համբարձումը կային
այդ ձայնանիշները և պահուում էին Դիւ-
զիանների մօտ որտեղից Համբարձումի ձեռքն
են անցնում և նու մշակում ու հրապարակ
է հանում: Բայց հաւանական չէ, ժամանա-
կակից ականատես անձինք այդ զիւտի պա-
տիւը միարերան վերադրում են իրաւամբ նա-
րան:

Տիրացու Բարս Համբարձումը ձայնանիշ-
ների և ամանակների ձեւ առնում է հայ-
կական հին խաղերից, բայց արարական ա-
ռնուններ է գնում: որովհետեւ իւր փորձերն ել
կատարում եր տաճիկ՝ արարական նուազա-
րանի՝ թամբորի վերայ ուր ամէն լար իւր
յատու կ արարերէն անունն ունի: Հայկական
անունազգութիւնը արգէն աւելի ուշ ժամա-
նակի և նորա աշակերտների գործն է:

Սոքա շուազգ նկատեցին ձայնանիշների
բազմավանկ անունների անյարմարութիւնը՝
ուստի կրծատելով թողին միայն առաջին
վանկը: Անունների կրծատումն առաջ բերու
նոր փոփոխութիւններ, ումանը Երրորդական
անուններն սկսեցին զործածել: Եղիս Ցուես-
եանը (+ 1881) ու ի տեղ ըստ, լա-ի տեղ լի
և ոյն փոփուն եր առաջարկում իսկ ուստիք
փորձեցին ձայնաւոր տառերով կոչել: (Այսպի-
սի խառնաշփոթութեան ժամանակ Ցածիններն
ել Օսմանլլ նօթասը՝ Օսմանեան ձայնանիշ
հրատարակեցին առանց մատպութեան, թէ
աջից ձախ զրուող խոտորկուուր զբերին ձա-
խից աջ շարուած ձայնանիշները յարմարել
չեն կարող):

Ամանակների կամ տեսղական նշանների
թերին լրացնում է Բարս Համբարձումի ա-
շակերտներից Արխտակէս Յովհաննիսինը՝
(+ 1878) այսինքն՝ $\frac{4}{4}$, $\frac{5}{52}$ և $\frac{5}{64}$ ամա-

նակները: Թէ ով է յարմարացրել ամանակնե-
րի հայկական անունազգութիւնը, զիւտինք:
Համբարձում Բարս տաճիկ՝ արարական
դիմի թէրէ, թէրէ, թէրէ, թէրէ և այն
անուններովն եր սովորեցնում: այն զանազա-
նութեամբ, որ նոցա երաժշատական տաղաչա-
փութեան մէջ աջ և ձախ ձեռքերի վեր
ու վայր ծնկատրով շարժուութեամբ է, բաղ-
նումները միմանցից որոշուում: իսկ նա ու-
քի, ձեռքի և մասների վեր ու վայր բաց-
ման վերածեց, որն և անունառում էր դիմի-
թէր: ամանակների հայկական անունակա-
չութիւնը, թռուերի վերածելը՝ բատ Եւրոպա-
կանի, նորա աշակերտներիցն է, մացել: Բա-
րս Համբարձումի տեղական նշաններն ան
յարմարութիւնն ու տառելութիւնն ունին
արևելեան երաժշատական տաղաչափութեան
նկատմամբ որ տաճիկական կնճռոս ուսուների
ամանակների գործադրութեան ըմբռնումը
միտնգամայն հեշտացաւ: բոլոր ուսուները նա
վերածեց մի բաղիսման արձեքի: Այս զրու-
թեամբ աւելորդ եղան տաճիկ՝ արարական
բազմանուն, խառնաշփուր, անդործնական և
անհիթել Սէմաի, Աղը Սէմաի, Դէմիրէվան,
Զէնչիր, Արսաք, Արսաք Քէրիք, Զարքաֆէմ,
Փանթէ, Դիւյէր, Մուհամեդ, Զէմրէր, Դէվ-
րի Քէրիք, Բէրէվչան, Խիրիք Սէմաի, Էվսաթ,
Հաֆիֆ, Սարիլ, Չիֆթէ Դիւյէր, Նիմ Սարիլ
Նիմ Դէմիր, Ռէմլ էֆէր, Հէվլէ, Փրէսգիֆէր,
Սօֆիան, և այն, և այն կոչուած հազար
ու մի անդէաք չափերի անուններով աշակերտ-
ների գլուխներն ուսունելը:

Զայների զօրութեան արտադրիչ նշան-
ներն (—, —, և այն) աւելացրին
Բարս Համբարձումի աշակերտների՝ զիւտառ-
բապէս Արխտակէս Յովհաննիսինք և սորտ
աշակերտ տիրացու Դարրիէլ Երանեանը (+
1860): Տիրացու Դարրիէլը եւրոպական ձայ-
նազրութեան արքերքին առաւել ծանօթ էր,
քան ժամանակակից տիրացու երաժշատները
ու եր ազգային երգերի տարածման մէծա-
պէս նպաստորց ուստի գործուրզը նորան
նօթաչի հաշուեց:

Ձետեղում ենք այդ բոլորի համեմա-
տական ցանկը ներքեռում: որովհետեւ եւրո-
պական ձայնանիշների կաղապարն առ ձեռն
շունիք, ուստի ձայնելի էջի կիսաճայնական
զրութիւնը որոշակի պատկերացնելու համար,
զործածեցինք լատինական տառերը որոնք
ընդհանուր են: Փակագծերի մէջ անուած-
ները չեն համաձայնում ձայնաստիճանով:
արևելեան F և Fis ձայները մի քիչ ցած,
իսկ Ais և H-e բարձր են արևելեան Արտ,

Դեւլէցու և Քիւրդի, Սիզեան ձայնաստիճաններից՝ այդ պատճռով Ե, F և H, C-ի արևելեան ձայնաստիճանի մէջ մանում են Աջեմ՝ և Փուսելիք կիսաձայները։ Այսպէս արևելեան ուժնեակը բաժանուում է երկու բանեալիք, որոնց մէջ կիսաձայների աստիճանը հաւասարաչափ ենում և իջնում է։

Ուրեմն արևելեան կիսաձայնական ելեկցն ութնեալիք մէջ պատճռակում է 15, իսկ արևմտեանը՝ 13 կիսաձայն, որովհեալ Նորապականում Eis = F-ին և His = C-ին։ Արարականը մինչև անգամ քառորդ ձայն և քառորդ ձայնական աստիճանով ելեկց ունի։

ԱՐԵՒԵԼԵԱԾԱՆ և ԱՐԵՒՄՏԵԱԾԱՆ ԿԻՍԱՁԱՅՆ ԵԼԵԿՑ.

Թիւ	Չեր	Տամկ. անուն.	Հայկական անուն.	Համապատական անուն.	Համապատական անուն.	Եւրոպական.	Տառ.	Տիմենուան.	Խափին.
1.	♩	Նըզեաչ.	Փուշ.	Փօ.	Ré.	Բ.	Ռա.	D.	
2.	♩	Փէս Հիսար	Փուշ կիսվեր.	Փօ կիսվեր	Ré dièse.	—	—	Diſ.	
3.	♩	Աշբան.	Եկործ.	Է.	Mi.	Ե.	—	E.	
4.	♩	Փէս Աջեմ.	Եկործ կիսվեր.	Է կիսվեր.	Mi dièse.	—	—	(Eis).	
5.	♩	Արաք.	Վերնախաղ.	Աէ.	Fa).	Ա.	—	(F).	
6.	♩	Գէվեշտ.	Վերնախաղ կիսվեր.	Աէ կիսվեր	(Fa dièse).	—	—	(Fis).	
7.	♩	Ռաստ.	Բենկործ.	Բէ.	Sol.	Ջ.	—	G.	
8.	♩	Զէրգիւլէ.	Բենկործ կիսվեր.	Բէ կիսվեր	(Sol dièse).	—	—	Gis.	
9.	♩	Դիզեաչ.	Խոսրովային.	Խօս.	La.	Լ.	Լի.	A.	
10.	♩	Ջիւրգի.	Խոսրովային կիսվեր.	Խօս կիսվեր	(La dièse).	—	—	(Ais).	
11.	♩	Սիզեաչ.	Սերբնախաղ.	Նէ.	Si.	Ո.	—	(H).	
12.	♩	Փուսելիք.	Սերբնախաղ կիսվեր.	Նէ կիսվեր	(Si dièse).	—	—	(His).	
13.	♩	Չարգեաչ.	Պարոյի.	Պա.	Do.	Օ.	—	C.	
14.	♩	Հիջաղ.	Պարոյի կիսվեր.	Պա կիսվեր	Do dièse.	—	—	Cis.	
15.	♩	Նէփա.	Փուշ.	Փօ.	Ré.	Բ.	Ռա.	D.	

ԱՐԵՒԵԼԵԱԾԱՆ ԵՒ ԱՐԵՒՄՏԵԱԾԱՆ ՈՒԹԵԱԱԹԵՐԵՐԻ ՑԱԱՄՐԵՐԻ ԹԻՒԹԻՒՆՆԵՐԻ:

Արեւելեան. 1. $\frac{9}{8}$, $\frac{5}{4}$, $\frac{14}{8}$, $\frac{5}{2}$, $\frac{5}{5}$, $\frac{11}{6}$. 2.
Արեւատեան. 1. $\frac{9}{8}$, $\frac{3}{4}$, $\frac{4}{5}$, $\frac{5}{2}$, $\frac{3}{5}$, $\frac{13}{8}$. 2.
C. D. E. F. G. A. H. C.

Ճիւրացու Համբարձումն ու աշակերտաները հայկական ձայնագրութիւնն արգելն զրել կարգալու չափ մշակել էին, երբ նորու աշակերտաները զանազան ուղղութիւնների սկսեցին չետեկել և եկեղեցական երաժշտութիւնը փախանակ մշակելու և պարզելու, խառնեցին ու պղտորեցին։ Ճիւրացու Համբարձումի անդրանիկ աշակերտաներից Պետրոս Զէօմէլքեանն ու սորա աշակերտաները սկսեցին մեծ ջանք թափել տաճկական մեղի եղանակները մեր եկեղեցական երաժշտութեան մէջ մուծելու համար։ Դժբաղգարար, զրեթէ բոլոր ձայնագետները նորա շեղ և խորթ ուղին էին բունք։ Ումանք, գեռ երտոսպական ձայնագրութեան հիմնական ասրելքը չըմունած, արևմտեան երաժշտական ողի ուղեցին ներշնչել հոգեռը երգերին։ Մի քանիսն էլ առաջարկում էին յունաց եկեղեցական երաժըշտութեամբ հայկականը սրբագրել։

Մինչդեռ Հայոց եկեղեցական երաժշտութիւնը մի շարք երաժիշտ և խամատական ախրացուների ձաշակի կամ կրքի խաղալիք էր դարձել կ. Պոլսից Հայոց Պատրիարքագրանիք աղ-

զային եղանակները մօտալու կորսալից ազատելու համար գործի ղղուխ անցաւ։ Այս բարի ձգտումն իրագործելու և գործին ուղիղ ընթացք տալու համար հարկ համարուեցաւ, որ կ. Պոլսի բազմակարծիք և ինքնաշաւարագունք մի յանձանժողով գումարուի։ Պատրիարքագրանը գործի ղեկավարութիւնը յանձնեց ուսումնական խորհրդին։

Ուսումնական խորհրդութքը, 1864-ին, սեպտեմբերի 25-ին հրաւիրած ղջեր ուղարկեց բոլոր տիրացուներին, որով իննըրում էր առաջնիկաց կիւրակին՝ հոկանմբերի 2-ին, Ղալաթիոյ (կ. Պոլսայ թաղ) Հայոց եկեղեցու սենեակներից մէկում մի երաժշտական ժողով գումարելով Հայոց եկեղեցական եղանակների կարգաւորութեան մասին հոգալ։ Բայց կ. Պոլսոյ բազմատեսակ տիրացուներից երկուսը են միայն ներկայանում։ Արիստակիս Յովհաննիսիսն և Եղիա Տնտեսեան, որոնք աւանդուահ և ականաւոր երաժիշտ տիրացուներ էին։ Ժողովը աեղի չ ունենում։ Մի երկրորդ հրաւիրածութիւնը 1864-ին զեկունդին հրաւիրում են Ազգային կրօնական ժողովին ներկայանալու։ Այս անգամ արգելն մեծամասնութիւնը բարեկարգ է գալ։ Այստեղ որոշում են, որ տիրացու երաժշտիւները մի մասնածողով կազմեն և եկեղեցական եղանակները բա-

բեկաղմելու հոգ տանին։ Քուէարկութեամբ
բնորում են մասնաժողովի համար անդամ
ներ։ բայց առաջին իսկ նիստից յետոյ ժո-
ղովը խափանուում է և անդամները յըրուում
են անմիջապէս։

Այս անյաջազութիւնն աւելի ևս խրա-
խուսեց տիրացուների կամացականութիւնն ու
երեակայութիւնը։ Անյաջազութեան հետեան-
ըլ մի նոր հոսանք յառաջ բերեց։ — անհա-
տական ձաշակի երածշտութեան հօսանք։
Խուժգութական բազմաթիւ մեղեղիներ, տա-
ղեր, ծէր — ողորմեաներ, Ամէն և ընդ
հոգւոյդ քումներ, Քրիստոս պատարագեալ-
ներ, մի խօսքով տաճկական Շարքի, Թիւրքի,
Մանի, Նանի եղանակներով պատարագի արաւ-
րողութիւններ, ծաղկագիր տեսրակներով, հո-
գածութեամբ զրուած, իւրաքանչիւր ինքն իւ-
րեն երժշտագէտ համարող տիրացուի կողմից
աշակերտներին և երգեցիկ մանուկներին իրը
անզին զանձ աւանդ արուեցաւ, որոնց նմուշ-
ներն այսօր էլ երգուում են Տաճկահոյաստանի
րոլոր փայրերում՝ մայրաքաղաքիցն սկսած մին-
չեւ վերջին զիւղական եկեղեցիները։

Մենք անձամբ ձանաչում ենք այդ ո-
գորմելի շրջանի ներկայացուցիչներից շատերին։
Սոցանից մէկը Բ... քաղաքի տիրացուն, գե-
րապատիւ առաջնորդի բաղդանքով, մի նոր
պատարագի արարողութիւն էր զրել որը և մեզ
ցցց տուեց պարծանքով՝ իւր սին հանձա-
րով ոգեսրուած։ Այս խոջուկի պատարագի եր-
գեցողութիւնից ահա մի քանի նմուշ յառաջ
ներ ըերուում։

Զարգեան։

Մակը.

Որհ նեալ է Ասու ուա

Ճ մ ո մ ո ւ ճ մ ո ւ ճ մ ո ւ ճ

Ճ մ ո ւ ճ մ ո ւ ճ մ ո ւ ճ մ ո ւ ճ

ճ մ ո ւ ճ մ ո ւ ճ մ ո ւ ճ մ ո ւ ճ

ճ մ ո ւ ճ մ ո ւ ճ մ ո ւ ճ մ ո ւ ճ

ճ մ ո ւ ճ մ ո ւ ճ մ ո ւ ճ մ ո ւ ճ

ճ մ ո ւ ճ մ ո ւ ճ մ ո ւ ճ մ ո ւ ճ

Օ րհ նե յ ե լ ո ւ լ ո ւ լ ո ւ լ ո ւ

ճ մ ո ւ ճ մ ո ւ ճ մ ո ւ ճ մ ո ւ ճ

նո լ ո ւ լ ո ւ լ ո ւ լ ո ւ լ ո ւ լ ո ւ

լ ո ւ լ ո ւ լ ո ւ լ ո ւ լ ո ւ լ ո ւ

օ ր հ ո ւ օ ր հ ո ւ օ ր հ ո ւ օ ր հ ո ւ

ճ մ ո ւ ճ մ ո ւ ճ մ ո ւ ճ մ ո ւ ճ

լ ո ւ լ ո ւ լ ո ւ լ ո ւ լ ո ւ լ ո ւ լ ո ւ

ճ մ ո ւ ճ մ ո ւ ճ մ ո ւ ճ մ ո ւ ճ

լ ո ւ լ ո ւ լ ո ւ լ ո ւ լ ո ւ լ ո ւ լ ո ւ

ճ մ ո ւ ճ մ ո ւ ճ մ ո ւ ճ մ ո ւ ճ

լ ո ւ լ ո ւ լ ո ւ լ ո ւ լ ո ւ լ ո ւ լ ո ւ

ճ մ ո ւ ճ մ ո ւ ճ մ ո ւ ճ մ ո ւ ճ

լ ո ւ լ ո ւ լ ո ւ լ ո ւ լ ո ւ լ ո ւ լ ո ւ

ճ մ ո ւ ճ մ ո ւ ճ մ ո ւ ճ մ ո ւ ճ

լ ո ւ լ ո ւ լ ո ւ լ ո ւ լ ո ւ լ ո ւ լ ո ւ

ճ մ ո ւ ճ մ ո ւ ճ մ ո ւ ճ մ ո ւ ճ

լ ո ւ լ ո ւ լ ո ւ լ ո ւ լ ո ւ լ ո ւ լ ո ւ

ճ մ ո ւ ճ մ ո ւ ճ մ ո ւ ճ մ ո ւ ճ

լ ո ւ լ ո ւ լ ո ւ լ ո ւ լ ո ւ լ ո ւ լ ո ւ

Հ ա յ ս ը մ ա լ ո ւ թ ա յ ա լ ո ւ թ ա յ ա լ
ր ա լ ո ւ թ ա յ ա լ ո ւ թ ա յ ա լ ո ւ թ ա յ ա լ
հ ա յ ն ա պ ր ա յ ա լ ո ւ թ ա յ ա լ ո ւ թ ա յ ա լ
ք ի զ ա լ ո ւ թ ա յ ա լ ո ւ թ ա յ ա լ ո ւ թ ա յ ա լ
Հ ա յ ս ը մ ա լ ո ւ թ ա յ ա լ ո ւ թ ա յ ա լ ո ւ թ ա յ ա լ
ց ո ւ ք ա լ ո ւ թ ա յ ա լ ո ւ թ ա յ ա լ ո ւ թ ա յ ա լ
գ ո ր մ ե ա :

Աշա այս շրջանի եկեղեցական երաժրշտութիւնն աչքի է ընկնում իւր անձտակի, և թէ չասենք անհամեսա, գոնէ խառնիխուռան, երաժշտական աւիւնից խապառ զուրկ ձայնանիշների կուտակումով. այլ ևս չենք ասում եղանակի և բառերի ներքին իմաստի կատարեալ անհամուայնութեան մասին. մինչդեռ խօսքերը մարդկութեան Փրկչի և եկեղեցու Մեծ Վարդապետի կենաց ամենանուի իրական բարկեներից մէկն են պատկերացնում և հաւատացեալին փրկութեան հազորդակից լինելու յօրդոր կարգում եղանակի վերնազիրն (Չարդեաց) արգեն պատորում է մարդու միոքն ու սիրտը, այն պատկերացմամբ՝ թէ դա արեկեան այն բազմամիւ զ եղանակներից մէկնէ, որ պահուցներում հասարակական կեր ու խումբ վայրերում է միայն երգուում և ընդունակ է ոգեսրելու միայն դուսան—աշուզներին և նոցա առաջ պարողներին:

Սանձարձակ տիրացուների շրջանը տեսաց 1864—1873-ը, երբ ազգային եկ. երաժշտութեան համար մի նոր շրջան է սկսում:

Աննամեայ ժամանակաշրջանում առ անդապահ տիրացուներն էլ ձեռք զարկին իրանց հաւանած հոգեւոր եղանակները ձայնապրերու, որ գոնէ եղանակն ազատուն անից տիրացուների ձանկերից Այստեղ պէտք է յիշենք, որ խակ տիրացուներին թէ ու թիկունք տալին ակզական առաջնորդներից մի քանիքը մասնաւանդ է, զոլոսոյ պայծառափայլ ամիրաները չելափները և առ հասարակ ունենոր և կ սրոզ անհամերը, որոնցից անհամերը, որոնցից անհամերը մէկը մի մի տիրացուի հովանաւորում է կերակրում էր, ուստի եկեղեցական եղանակները մէկին հազար պատկերում է առ համար պատուղ տունին:

Շարականը ձայնապրերու առաջին փորձը արտւ երաժիշտ տիրացու հարա համբարձումը լիւ 1839 թունին. ձայնապրեց մինչեւ ու գատակի օր հնու-

թիւնը «Այսօր յարկեաւ ը բայց վերահստ մահը զործն ընդհատուց. կարծ ժամանակից յետոյ ձայնապրածներն էլ անդադաշտանն Երկրորդ փորձն արել է երաժիշտ Եղիա Տնտեսեանը և տարբակ 1870-ին: Երրորդ ձայնապրուն է Համբարձում Ձերքեանը, որ ցարդ Արմաշուղը վայրեալ զառ է տալիս եկեղեցական երգեցազութիւն և ձայնապրութիւն. արտասին զրում է Եղիա Տնտեսեանը. Այս դորձին ուրիշներ ույ կարելի է ձեռնարկած ըլլան, բայց աստղամէ հանգուցեալ Պալեան Կարապետ ամերայի սատարութեամբ ձայնապրածը միայն ծանօթ է մեզ. որ թէ և մեծ դորձ մ' է, սակայն մէկ երգողին մէկ ձայնապրոցին այսնիքն երկու կարծիք է. և չունի այն քննական ուղղութիւնը, որ անհրաժեշտ է այսպիսի ձեռնարկի թիւն մը համար. միանկամայն ինչպէս կնշանաւուի ձայնագրողը քիչ շատ յանդուզն փորձեր բրած է՝ մեր եղան ակները ասմականին վերայ սրբագրելու: Այս կարծիքին համաձայն ենք. մեր ձեռքունն էլ կան նորա ձայնապրութեան կանոնատերից և ական քայլու ածները, որոնք իրաւունք են ապիս, ինչպէս կոհետենք, Տնտեսեանի զբանը հաստատելու: (Ցես այս մասին երկրորդ յշջանի պատմութիւնը): Առում են, թէ Արիստակիս Յովհաննիսիսանն էլ է ձայնապրեր որպէս և զայց ուրիշ տիրացուները, բայց մեզ յայտնի չեն:

Առաջին շրջանը փակուում է մի երրորդ երաժշտական յանձնաժողովով, որ անդի ունեցաւ 1873-ին ապրիլի 22-ին և տեսաց երկու տարու շաբի մինչեւ 1875-ի վերջերը:

Յանձնաժողովի առաջին նիստին ներկայ են լինուում ընտրուած 14 անդամներն էլ. երկար վիճարանութիւնից յետոյ, ոմանք, անձնական լրգերի համար բար արար անունդ չպանելով, հեռանուում են անմիջապես, մընացածները ձայների մէծամասնութեամբ վրձնուում են քննութեան առնել Եղիա Տընտեսեանի ձայնապրած շաբականը և հոգեւոր երգերն, իրեկ առաւել յարմարաւոր գործ, և ազագութեան հոգուր քաշելու միջոցներ որոնել: Մեզ յայտնի չէ, թէ արգելօք յանձնաժողովը վերջացրեց իւր պարագաներներն այս շաբականի նկատմամբ, թէ ոչ, կամ թէ ինչ եղաւ և որի մաս մասց այդ գործը բայց սական միայն զիտենք, որ Ահ ընտրեալներից շրբեն է միայն մինչեւ վերջ շարունակուում անդամակցել:

(Նարուն նորի իի).

Կոմիտոս վարդապետ.